Հայտերի ներկայացման հրավեր

Հայաստանի Հանրապետություն
14 մարտի 2014 թ.
Հայաստանի սոցիալական ներդրուների հիմնադրամ III Ծրագիր
Պայմանագիր **# VZ-024**
Վարկ **No IDA -50710-AM**
Լրացուցիչ ֆինանսավորում III

VZ-024, Խնձորուտի համայնքի կենտրոնի վերակառուցում

1. Հայաստանի սոցիալական նեդրումների հիմնադրամ (ՀՍՆՀ) III Ծրագրի ֆինանսավորման նպատակով Հայաստանի Հանրապետությունը Միջազգային Զարգացման Ընկերակցությունից ստացել է վարկ և նախատեսում է օգտագործել այդ միջոցների մի մասը **VZ-024, Խնձորուտի համայնքի կենտրոնի վերակառուցման** վավերացված վճարումները կատարելու համար:

2. Պատվիրատուն՝ **Խնձորուտի համայնքի կենտրոնի վերակառուցման** ծրագիրն իրականացնող կոմիտեն, որը համաձայնագիր է կնքել ՀՍՆՀ-ի հետ, իրավասու և որակավորված հայտատուներին հրավիրում է ներկայացնելու մրցութային հայտերի կնքված փաթեթներ **Խնձորուտի համայնքի կենտրոնի վերակառուցման** աշխատանքներն իրականացնելու համար: Շինարարության տևողությունը **150** օրացուցային օր.

3. Մրցույթը կիրականացվի Համաշխարհային Բանկի ուղեցույցում (Procurement of Goods, Works, and Non-Consalting Services under IBRD Loans and IDA Credits & Grants by World Bank Borrowers, January 2011) սահմանված ազգային մրցույթի ընթացակարգով և, ինչպես նշված է մրցութային փաստաթղթերում, բաց է բոլոր իրավասու հայտատուների համար:

4. Որակավորման պահանջները ներառում են՝ ա/ վերջին երեք տարիներից որևէ մեկ տարում կատարված **100,000,000** դրամի շին. աշխատանքների ծավալ, բ/ վերջին հինգը տարվա ընթացքում որպես գլխավոր կապալառու կատարած առնվազն երկու քաղաքացիական շենքերի վերակառուցան (ներառյալ առանձին կրող կոնստրուկցիաների ուժեղացման) պայմանագրեր: Ներկայացվող աշխատանքներից յուրաքանչյուրի արժեքը չպետք է պակաս լինի **33.000.000** ՀՀ դրամից, գ/ նվազագույնը **17.000.000** դրամի դյուրիրացվելի միջոցներ և/կամ վարկային գիծ, դ/ որպես պայմանագրի շնորհման նախապայման,

հայտատուն պետք է ներկայացնի ՀՀ Քաղաքաշինության նախարարության կողմից հաստատված **«Քաղաքացիական»** լիցենզիաներ:

5. Շահագրգիռ հայտատուները մրցութային փաթեթը հայերեն լեզվով կարող են ստանալ ՀՍՆՀ գրասենյակից՝ Կ. Ուլնեցու 31, 4-րդ հարկ, Ձեռքբերումների վարչություն հասցեում, ժամը 10:00 մինչև 17:00, յուրաքանչյուր փաթեթի համար վճարելով 2,500 դրամ: Շահագրգիռ հայտատուները լրացուցիչ տեղեկություններ կարող են ստանալ վերոնշյալ հասցեում:

6. Հայտերի վավերականության ժամկետը կկազմի **60** օր հայտերի բացման պահից և բոլոր հայտերը պետք է ուղեկցվեն մրցութային հայտի ապահովման հայտարարագրով:

7. Հայտերի ներկայացման հասցեն՝ **Վայոց Ձորի մարզ, գ. Խնձորուտ, /գյուղապետարանի շենք/:** Հայտերը կբացվեն **2014 թ. ապրիլի 15-ին**, ժամը **14:00-ին** այն մասնակիցների ներկայությամբ, ովքեր կցանկանան մասնակցել: Փաթեթների ներկայացումը էլեկտրոնային եղանակով չի թույլատրվում:

8. Ուշացված հայտերը չեն ընդունվում և առանց բացելու վերադարձվում են հայտատուին: